

**Տ. ԴԱՆԻԵԼ ԱԲԵՂԱ ԹՌՒՄԱՆՅԱՆ**
(ավազանի անունը՝ Արփակ)

Ծնվել է 1976 թվականի նոյեմբերի 5-ին Երևան քաղաքում:

1982-1992 թթ. սովորել և ավարտել է Երևանի թիվ 106 միջնակարգ դպրոցը:

1993 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1999 թվականի մայիսի 23-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Ռուսկան արքեպս. Գալփաքյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

1999 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է անցել տեղում՝ որպես վերակացու:

2000 թվականի հոկտեմբերի 11-ին պաշտպանել է «Եղիազար Կաթողիկոս Այնթապեցի» թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: